ՄԵԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Մեր թվականության 640-50-ականներին կառուցված հանրահռչակ Զվարթնոց տաճարը առաջին անգամ կործանվեց 10-րդ դարի, երկրորդ անգամ՝ 20-րդ դարի վերջերին։

Եթե առաջին կործանման անմիջական պատճառները, այնուամենայնիվ, մնացին չպարզված, ապա երկրորդ կործանման պատճառները ակներև են։

Դարասկզբին, պեղումներով բացված հուշարձանի ավերակը անբավարար վիճակում էր։ Անհրաժեշտություն էր զգացվում իրավիճակի որոշակի բարելավման և հետագա քայքայումից մեզ հասած նշանակալից բեկորների պահպանման։ Վերջին անգամ այդ հարցը բարձրացվեց Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին առընթեր պատմության ու մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության գիտամեթոդական խորհրդում։

Որքան շատ խոսվեց և գրվեց Զվարթնոցի վիճակի կարգավորման մասին, այնքան վատացավ և վատթարացավ հուշարձանի վիճակը, նրա բազմաթիվ բեկորները ոչ միայն չպաշտպանվեցին, այլ նրանց քայքայման համար ստեղծվեցին առավել նպաստավոր պայմաններ։ Ահավասիկ հուշարձանի շուրջը, հարթակի վրա երբեմնի տեղակայված բոլոր բեկորները հավաքվել, տեղափոխվել են արևելակողմի հարթակ, այստեղ ու այնտեղ խմբավորվել, թողնվել արևի ու անձրևի, քամու և փոշու քայքայող ազդեցությանը ենթակա։ Այսպես տարիներ շարունակ։ Այդ ժամանակաընթացքում, առանց շտապելու, կառուցել են ճանապարհ, մայթեր, առուներ, մուտքեր ու ելքեր, ցանկապատներ։ Այս վերջին տարում տաճարը սալահատակել են, կանգնեցրել են կամարաշարի սյուներ ու տեղակայել խոյակներ, իսկ թափված բեկորների շուրջը ամեն տարի փարթամորեն աճում են տատասկն ու մոլախոտը՝ կրծելով քարերի նրբորեն մշակված հյուսկեն հարթաքանդակները, աղավաղելով չափերն ու մանրամասները, քայքայելով ու խարխլելով այդ բեկորների օրգանիզմը։ Այս ամենի համար երևի թե անհրաժեշտ է պատասխանատվության կանչել մեղավորներին։

Արդ, ինչո՞վ են զբաղված հուշարձանը տնօրինողները, ի՞նչ առաջադրանք ունեն և ինչպե՞ս են այն իրականացնում։ Մամուլում հաճախ է գրվում, որ Զվարթնոցը վերականգնվում է. ճիշտ չէ՝ Զվարթնոցը չի վերականգնվում։ Հուշարձանների պահպանության գլխավոր վարչության գիտամեթոդական խորհրդի որոշմամբ, Զվարթնոցի ավերակը կարգի է բերվում և ամրացվում, հնարավոր մասնակի վերականգնումներով՝ գերազանցապես պահպանված քարերի գործածությամբ։

Մասնակի վերականգնում ասելով, ոմանք ենթադրում էին շինարարական աշխատանքների զգալի ծավալ, ընդհուպ տաճարի առաջին աստիճանի արտաքին թմբկապատի բարձրությամբ, որ հասնում է մոտ 20 մետրի։ Այդ սխալ մտայնությունը մերժելով, առաջարկվել է այդ թմբկապատի գոյություն ունեցող որմնախարսխի վրա ևս երկու շարքի չափով պատ բարձրացնել, այդտեղ տեղակայել մասամբ վնասված դեկորատիվ սյունաշարի խարսխաքարերը և էլի մեկ շարք։ Ճակատի ստորին մասի վերականգնման միակ գծագրում պատկերված են այդ երկու շարքերը, հարավային խաչաթևի կամարաշարը, մուտքերից մեկը, կամ երկուսը։ Տվյալ գծագրի հեղինակ Լ. Սադոյանը խորհրդին հավատացնում էր, որ գործադրվելիք քարի 70 տոկոսը կլինի պեղումներով բացված քարը։ Այսպիսով, հետապնդվում էր այն նպատակը, որ ավերակը մնա անձեռնմխելի, որպես 7-րդ դարի կառույցի մնացորդ և ոչ արգասիք 20-րդ դարի շինարարական գործունեության։

Որքան մեզ հայտնի է, Զվարթնոցի վերաբերյալ այլ որոշում չկա։ Այդ դեպքում ու՞մ նախաձեռնությամբ է, որ այսօր աշխատանքների ղեկավարը Զվարթնոցի հին հիմնապատերի վրա բարձրացրել է ոչ թե մեկ, այլ երեք սյունաշարեր և չորրորդ խաչաթևի հոծ պատը՝ զգալի չափերով։ Բարձրացվել են նաև արծվապատկեր խոյակով սյուները։ Բոլոր նշանները կան, որ նախապատրաստվում են բարձրացնել այլ պատեր ևս։

Գիտամեթոդական խորհրդի որոշումը ծավալային առումով գերազանցելու խիստ վնասակարությունը պետք է հասկանալի լիներ և նման գործողություններից

հետ պահեր ճարտարապետներին։ Այս առումով նրանից էլ պետք է բացատրություն պահանջել։

Նկատենք, որ շինարարական ծավալների հավելումները իրականացվել են, դժբախտաբար, բոլորովին նոր մշակված քարով։ Այսպես, նոր կանգնեցված շուրջ 22 սյուների բներից 20-ը (90 տոկոս) պատրաստվել են հանքից բերված նոր քարից։ Բոլորովին նոր քարից են պատրաստված շատ խոյակներ, նույնպես և արևելյան խորանի պատը, աղոթասրահի սալահատակը, արտաքին հարթակի սալահատակի 90-95 տոկոսը։ Տպավորությունն այն է, և այդպես էլ կա, որ հուշարձանը իր մեջ 7-րդ դարից քիչ բան ունի, դեռ ավելին, տարբերանշաններ չունենալու, այսինքն՝ տաշվածքում և քարի տեսակում նույնական լինելու հետևանքով, հին ու նոր քարերը շատ ժամանակ չանցած չեն տարբերվի միմյանցից և չի հասկացվի, թե որն է հնից եկածը, որը՝ նորը։ Սա ոչ միայն դժվարացնում է հետագա հետազոտողների խնդիրը, այլև մեզ դնում է դժվար կացության մեջ, երբ անհրաժեշտ է լինում ներկայացնել հուշարձանը՝ որպես 7-րդ դարի գործ։ Հենց սա էլ նշանակում է տաճարի նոր կործանում։

Սա անթույլատրելի է։ Գլխավոր վարչությունը, նրա նախագծային ինստիտուտը, աշխատանքների գլխավոր ճարտարապետը այլընտրանքային նախագիծ չունեն, չէին էլ ունենալու, քանի որ իր իրավունքների մեջ է ճանաչում ստացած և ընդունված Թ. Թորամանյանի վերակազմության նախագիծը։ Գլխավոր վարչության գիտամեթոդական խորհուրդը իր որոշումները կայացնելիս հենվում է դրա վրա։ Հետևաբար, աշխատանքների ղեկավարը պարտավոր էր ազնվորեն իրականացնել այն, ինչը կա Թորամանյանի նախագծում։ Բայց արդյո՞ք այդպես է։ Դժբախտաբար ոչ։ Շինարարական աշխատանքների ճարտարապետական մասի ղեկավար Լ. Սադոյանը խախտել է նախագիծը, դրա համար հիմք ու առիթ չունենալով։ Ցավոք, նա չի գիտակցում, որ շինության ստորին մասերում նախագծից շեղումը ոչ միայն զուրկ է դրական կողմից, այլ կարող է հասցնել փակուղու՝ վերին մասերում։ Նման քայլը անշուշտ հետևանք է շինության ամբողջությունը չպատկերացնելուն։

Թորամանյանի նախագծով մայր մույթերի թիկունքակողմի արծվախոյակ սյան բունը միակտոր է և ունի մոտ 2,2 մետր բարձրություն, տեղում այն իրականացվել է երկու կտորից, հասցնելով մոտ 3,77 մետրի։ Այդ սխալի մասին նախ զգուշացվել է գիտամեթոդական խորհրդում նախագիծը քննելիս, ապա և 1989-90 թվականներին, երբ դեռ մեկ սյունն էր կանգնեցված, իսկ այժմ՝ բոլորը։

Բանն այն է, որ այդ սյան գրեթե կրկնակի բարձրության հասցնելը տարիներ առաջ առկա էր մի այլ վերակազմության գծագրերում։ Հեղինակը այդ ձևով փորձում էր ժխտել թորամանյանական նախագծով բոլորակ սրահի երկհարկ լինելը։ Այժմ ահա, թերևս, նրա իսկ խորհրդով, Լ. Սադոյանը սյանը տվել է մեծ բարձրություն։ Այս հարցում և Լ. Սադոյանը, և նրա խորհրդատուն իրենց մասնագիտական պատրաստությամբ ակներև զիջում են ճարտարապետ-գիտնական Թորոս Թորամանյանին, հակառակ դեպքում նրանք ձեռնպահ կմնային և չէին շեղվի նախագծից։

Զվարթնոցում շքամուտքերը հինգն են, բացի արևմտակողմից, հարավակողմից և հյուսիսակողմից, դռներ կան հարավ-արևմտակողմից և հյուսիս-արևմտակողմից։

Արդ, ի՞նչն է թելադրել Զվարթնոց կառուցողին մուտքեր ունենալ նաև անկյունագծային ուղղությունների վրա։ Զվարթնոցի հատակագծին ուշադիր նայողը կնկատի, որ այդ անկյունագծային դռները բացվում են ճիշտ և ճիշտ արծվախոյակ սյուների վրա։ Այդ մուտքերից ներս մտնողի հայացքի դիմաց, մի քիչ բարձրադիր՝ պատկերվում է սյան խոյակի խրոխտ հայացքով արծվապատկերը։ Հենց այդ պատկերին հանդիպելու հաճույքը զգալու համար էլ այդտեղ բացվել են այդ անկյունագծային մուտքերը։

Սա չըմբռնելով՝ ճարտարապետը արծվախոյակ սյունը բարձրությամբ գրեթե կրկնապատկել է։

Արծվախոյակը Զվարթնոցում չի կարող գտնվել այդ բարձրության վրա։ Այդ բարձրության վրա արծվախոյակը չի ընկալվում, մանրամասները մնում են անտեսանելի, տաճարի ներքին շքեղություններից այդ հանգույցը նշանազրկվում է, շրջանց սրահը լուսավորող պատուհանների լույսը նրան չի հասնում։ Ասենք նաև, որ

խաչաթեների քանդակազարդ խոյակների հորիզոնական շարքը մայր մույթի հետնամասում, որ պսակվում էր շքեղակերտ արծվախոյակով, անհասկանալիորեն ընդհատվում է, անկյունագծային ուղղության վրա գտնվող շքամուտքերի գոյությունը դառնում է անբացատրելի, ավելորդ մի բան։ Մինչ Զվարթնոցի պես կատարյալ շինության օրգանիզմում ավելորդություն չի ենթադրվում։

Թորամանյանական նախագծում արծվախոյակը 3-4 մետր բարձրության վրա է, այդ դեպքում, մեծազանգված թաղերի հենարանները տարբեր բարձրությունների վրա գտնվելով, կրող զանգվածի ամենակարևոր տեղում բարձրությունը առավել մեծանում է, դառնալով հուսալի հիմք նրա վրա բարձրացող հոծ պատի համար։

Հենց այստեղ էլ հիշենք, որ մեկ կտորից ոչ բարձր սյան բունը ավելի կայուն է և կրողունակ, քան երկու կտորից և մեծ բարձրության սյունը։ Ոչ պակաս կարևոր է հիշյալ մեծազանգված թաղերի ստորին եզրագծի գեղագիտական կողմը, որ ստանում է արծվաթևերին համահունչ պատկեր։

Պետք է նկատել, որ արծիվը մարդու տեսողությանը և լսողությանը արժանանում, տպավորիչ է դառնում, երբ սլացքով իջնում է իր որսը տանելու։ Այդ ժամանակ է լսվում նրա թևաբախումը և տեսանելի է դառնում լայն բացված աչքն ու տպավորիչ կտուցը;

Զվարթնոցի ճարտարապետը, նաև Թորամանյանը, դա լավ են իմացել և թռչունների արքայի համար ապահովել են պատշաճ տեղ ու դիրք։

Ինչևէ, սխալը կատարված է, այն պետք է ուղղել անհապաղ, ինչ գնով էլ լինի։ Տարիներ առաջ մեր մամուլի էջերում գրվեց հետևյալը՝ «Զվարթնոցի՝ մեր ազգային ճարտարապետության այդ մեծ կոթողի շահերը պահանջում են, որ նրան առնչվող ամեն փաստ, առավել ևս ամեն մի ձեռնարկում պետք է լինի կշռադատված, մասնագիտորեն ճշգրիտ, որպեսզի մենք կրկին չկանգնենք արդեն նորօրյա կորուստների փաստի առջև»։ Այժմ մենք հենց այդ վիճակում ենք։

Զվարթնոցում ստեղծված իրավիճակը հետևանք է անպատասխանատու գործունեության, չափի զգացումի բացակայության։ Անհրաժեշտ է հնար գտնել

Զվարթնոցի հուշարձանը անդառնալի կորստից փրկելու համար, եթե միայն արդեն ուշ չէ։

Տիրան ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՀՀ վաստակավոր ճարտարապետ

«14-րդ հարկ», 11 սեպտեմբերի 1992 թ.: